ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-47

ք. Երևան

«13» 02 2025 թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ի1» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Սաֆարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

(գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **19 584 000 (տասնինը միլիոն հինգ հարյուր ութսունչորս հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	«Ի 1» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	հասցե՝ ք.Երևան, Մամիկոնյանց 38/3, տուն 49/1
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ «Արաբկիր» մասնաճյուղ
Հ/Հ 900011049187	Հ/Հ 2050622094601001
ՀՎՀՀ 02882913	ՀՎՀՀ 00160406
Հեռ. 010 59-61-52	Հեռ: 010 20 20 27
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am	Էլ. Փոստ: info@earlyone.com
Ա. Ֆիդանյան	Գ. Սաֆարյան----------
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/	(ստորագրություն)
(ստորագրություն)	Կ.Տ)
Կ.Տ	

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«13» 02 2025թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՄՄԾՀԲ-2025/Ա-47 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ CPV 72261160/3	Ըստ հավելված 1.1-ի	դրամ	19 584 000	1	ք. Երևան Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օր հետո:

Հավելված 1.1

Տեխնիկական նկարագիր
ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ստորաբաժանումներում գործող հերթերի կառավարման համակարգի տեխնիկական և ծրագրային սպասարկում

ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության (այսուհետ՝ նաև՝ Պատվիրատու կամ ՀՀ ՆԳՆ ՄՔԾ) հաճախորդների հերթերի կառավարման համակարգը (այսուհետ՝ նաև՝ Համակարգ) պետք է պարունակի հաճախորդների հերթագրման ծրագրային լուծում:

Հաճախորդները պետք է հնարավորություն ունենան .

- Ընտրել սպասարկման համար նախընտրելի օր և ժամ օրացույցի հասանելի ամսաթվերի շրջանում,
- Ընտրել սպասարկման համար անհրաժեշտ ծառայության տեսակը, որոնց ցանկը տրամադրվում է Պատվիրատուի կողմից,
- Տեսնել ամրագրման համար հասանելի ամենամոտ ամսաթվերը՝ համապատասխանաբար նաև բաժնի հասցեները,

- Ստանալ հերթում գրանցվելու հաստատման վերաբերյալ տեղեկատվություն,
- Ստանալ հերթը չեղարկելու վերաբերյալ տեղեկատվություն,
- Ստանալ հերթում հաստատված գրանցման իրենց վերաբերող մանրամասները, մասնավորապես՝ գրանցման ակտիվացման կոդ, ամրագրված օր, ժամ և սպասարկման ստորաբաժանումը:

Վերոնշյալ ծրագրային լուծման միջոցով Պատվիրատուի հաճախորդների սպասարկման ստորաբաժանմանվերահսկող անձնակազմը պետք է հնարավորություն ունենա.

- Դիտել օրվա ընթացքում Պատվիրատուի մոտ ամրագրված հերթերի մանրամասները, մասնավորապես՝ ամրագրված ժամը, ծառայության տեսակը և այլն,
- Կարգավորել Պատվիրատուի սպասարկման ստորաբաժանումների և անձնակազմի աշխատանքային գրաֆիկները, սակայն պետք է բացառված լինի հերթագրումների մասով ամրագրում խմբագրելու, ավելացնելու կամ հեռացնելու հնարավորությունը,
- Կարգավորել Պատվիրատուի կողմից տրամադրվող ծառայությունների ցանկը,
- Վերահսկել Պատվիրատուի սպասարկող անձնակազմի ծանրաբեռնվածությունը իրական ժամանակում և պատմական տվյալների միջոցով,
- Արտահանել տարատեսակ հաշվետվություններ Պատվիրատուի մոտ գրանցված հերթերի, Պատվիրատուի սպասարկման ստորաբաժանումների և անձնակազմի ծանրաբեռնվածության վերաբերյալ:
- Ունենալ գործիքներ, որոնք հնարավորություն կտանտեսնել աշխատակազմի կատարողականի, պարապուրդի ցուցանիշներ, ինչպես նաև յուրաքանչյուր օպերատոր-աշխատակցի օգտագործած կոճակների ցուցանիշները:

Սպասարկման **գրասենյակների ղեկավարները** պետք է ունենան ընդլայնված ֆունկցիոնալով հաշիվ, մասնավորապես գրասենյակի օպերատոր-աշխատակիցների նկատմամբ հսկողական գործառույթներ իրականացնելու հնարավորությամբ, ամրագրումների ամբողջական ցանկերին հասանելիություն ունենալու հնարավորությամբ, հաշվետվություններ գեներացնելու հնարավորությամբ, սակայն պետք է բացառված լինի այդ հաշվից ամրագրում խմբագրելու, ավելացնելու կամ հեռացնելու հնարավորությունը:

Պատվիրատուի ստորաբաժանումներում տեղակայված հերթերի կառավարման տերմինալների (այսուհետ՝ նաև՝ Տերմինալ), ինչպես նաև Համակարգի ծրագրային սպասարկման, միայն Պատվիրատուի միգրացիայի և քաղաքացիության ծառայությունների պաշտոնական վեբ-կայքի, ինչպես նաև առկայության դեպքում՝ Պատվիրատուի միգրացիայի և քաղաքացիության ծառայությունների բջջային հավելվածի համար

API-ի միջոցով Համակարգի տրամադրման (այսուհետ՝ նաև՝ Ծառայությունների մատուցման) ամբողջ գործընթացը իրականացնել Պատվիրատուի առանձին ստորաբաժանման՝ մեկ միասնական խնդիրների արձագանքման կենտրոնի շրջանակներում, նախապես ծառայությունը մատուցող ընկերության (այսուհետ՝ նաև՝ Կատարող կամ Սպասարկող ընկերություն) կողմից պաշտոնապես տրամադրված էլեկտրոնային հասցեին խնդրի վերաբերյալ ծանուցում ուղարկելու միջոցով: Էլ. նամակը Կատարողի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին ուղարկելուց և ստացման վերաբերյալ հաստատում ուղարկելուց հետո Սպասարկող ընկերությունը համարվում է ծանուցված առկա խնդրի վերաբերյալ: Ծանուցումից հետո ներկայացված խնդիրը պետք է կարգավորվի ք.Երևանում 1, իսկ ՀՀ մարզերում 2 աշխատանքային օրվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում Կատարողը կարող է Տերմինալները կամ դրա կոմպոնենտները վերանորոգման նպատակով տեղափոխել Կատարողի գրասենյակ: Աշխատանքային օրեր են՝ երկուշաբթիից ուրբաթ՝ բացառությամբ՝ շաբաթ, կիրակին ՀՀ օրենսդրությամբ ոչ աշխատանքային համարվող օրերի: Խնդիրները սահմանված ժամկետում չկարգավորելու դեպքում Կատարողը պետք է էլ. Նամակով տեղեկացնի Պատվիրատուին և ներկայացնի խնդրի կարգավորման ողջամիտ ժամկետ: Տեխնիկական խնդիրներ են համարվում նաև հերթի տերմինալների մոնտաժման, ապամոնտաժման աշխատանքները և տեղափոխումը ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ցանկացած ստորաբաժանում, որը նախապես նշված կլինի Պատվիրատուի կողմից: Տերմինալների կամ դրանց կոմպոնենտների խափանման դեպքում, դրանք ենթակա են սահմանված ժամկետում փոխարինման կամ վերանորոգման մասնագիտացված կազմակերպության կամ Սպասարկող ընկերության միջոցով այնպես, որ Համակարգի բնականոն աշխատանքը որևէ ժամանակում չխաթարվի սույն տեխնիկական նկարագրով սահմանված խնդիրների լուծման պայմանների շրջանակներում (Տերմինալի վերանորոգումը սահմանված ժամկետից երկար տևելու դեպքում Կատարողը պետք է ժամանակավորապես տեղադրի այլ տերմինալ): Համակարգի աշխատանքը կարող է խափանվել դրա վրա աշխատանքների իրականացման նպատակով, որի վերաբերյալ Կատարողը կփորձի նախապես տեղեկացնել Պատվիրատուին, ինչպես նաև Կատարողից անկախ հանգամանքներում: Կատարողի՝ սույն նկարագրում նշված ծառայությունների դիմաց Պատվիրատուի կողմից վճարումը ուշ կատարելու կամ չկատարելու դեպքում Կատարողը կարող է կասեցնել կամ դադարեցնել ծառայությունների մատուցումը, մինչև վճարման պատշաճ կատարումը:

Մարդկային հոսքերի (հերթերի) կառավարման, տեխնիկական (ծրագրային միջամտություն չպահանջող) փոփոխությունների տրամաբանության ողջամիտ փոփոխությունները ենթակա են իրականացման Պատվիրատուի կողմից ներկայացվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝հնարավորինս հարմարեցված տվյալ ստորաբաժանման գործառույթներին և պահանջներին:

Միասնական խնդիրների արձագանքման կենտրոնը համապատասխան խնդրի մասին հաղորդում ստանալու և այն որպես ենթակառուցվածքային խնդիր նույնականացնելու դեպքում այդ մասին ծանուցում է ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն:

Ենթակառուցվածքային խնդիրների դասին են պատկանում այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝

1. Ցանցային խափանումը կամ դրա անընդունելի թողունակությունը,
2. Հոսանքի կետի, կամ էլ մատակարարման բացակայությունը,
3. Այլ խնդիրներ, որոնք Սպասարկող ընկերության իրավասությունից դուրս են:

Կատարողը պետք է իրականացնի համապատասխան մեկանգամյա ուսուցումներ ՀՀ ՆԳՆ ՄՔԾ աշխատակիցների հետ ծանոթացնելով հերթերի կառավարման համակարգի օգտագործման պայմաններին աշխատակիցներին տրամադրել ուղեցույցեր համակարգից օգտվելու վերաբերյալ:

Հերթագրման ցուցակներում որևէ փոփոխություն Կատարողի կողմից առանց Պատվիրատուի հետ համաձայնեցնելու արգելվում է (անձնական տվյալների խմբագրում, հերթագրման չեղարկում կամ նոր հերթագրման ավելացում):

Առանց Պատվիրատուի հետ համաձայնեցման արգելվում է Համակարգում որևէ տեսակի ծրագրային միջամտություն:

Եթե Կատարողն ունի սեփական բջջային հավելված, որտեղ Կատարողի համաձայնությամբ կամ ցանկությամբ կարող են ներառվել նաև Պատվիրատուի ծառայությունները, ապա հավելվածում ցանկացած փոփոխություն, որը կարող է անդրադառնալ միայն Պատվիրատուի ծառայությունների վրա, պետք է նախապես համաձայնեցվի՝ համաձայնեցումն իրականացնելով էլեկտրոնային փոստի միջոցով:

Պարբերաբար Պատվիրատուն վերլուծում է հերթերի կառավարման արդյունավետությունը և Կատարողի հետ քննարկում դրանց արդյունավետության բարձրացման մեխանիզմներ և սցենարներ, համատեղ գնահատվում է առաջարկվող լուծումների ներդրման հնարավորությունը: Լուծման՝ հնարավոր գնահատման պարագայում համաձայնեցվում են դրա ներդրման ժամկետները, անհնար գնահատման պարագայում՝ Կատարողը Պատվիրատուին առաջարկում է առաջադրված խնդրի լուծման համանման կամ այլ հնարավոր լուծում: Լուծման շուրջ ընդհանուր համաձայնություն ձեռք բերելուց հետո քննարկվում են դրա ներդրման ժամկետները:

Եթե Կատարողի համակարգում բացակայում է վերոնշյալ կետերից որևէ մեկի կամ մի քանիսի ապահովման գործիքակազմը, ապա Կատարողը պարտավորվում է այն ստեղծել/ապահովել պայմանագրի կնքումից հետո եռամսյա ժամկետում:

Պայմանագրի կնքումից հետո Պատվիրատուն Կատարողին կներկայացնի առցանց ամրագրումների և կենդանի հերթի ձևաչափում գեներացվող կտրոնների տրամադրման չարաշահումների վերաբերյալ տեղեկություններ, իսկ Կատարողն իր հնարավորությունների

սահմաններում կառաջարկի այդ չարաշահումների դեմ պայքարելու մեխանիզմներ: Առաջարկների շուրջ պայմանավորվածությունն ու ներդրումը կողմերը կջանանիրականացնել վերը նկարագրված կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011049187
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

Ս. Ֆիդանյան
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Ի 1» ՍՊԸ
հասցե՝ ք.Երևան, Մամիկոնյանց 38/3, տուն 49/1
Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ «Արարկիր» մասնաճյուղ
Հ/Հ 2050622094601001
ՀՎՀՀ 00160406
Հեռ: 010 20 20 27
Էլ. Փոստ: info@earlyone.com

Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ.Տ)

Հավելված N 2
«13» 02 2025 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-47 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160/3	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ		2 937 600	2 937 600	7 833 600	7 833 600	7 833 600	13 708 800	13 708 800	13 708 800	19 584 000	19 584 000	19 584 000	**19 584 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011049187
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am
_____ Ա. Ֆիդանյան
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Ի 1» ՍՊԸ
հասցե՝ ք.Երևան, Մամիկոնյանց 38/3, տուն 49/1
Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ «Արաբկիր» մասնաճյուղ
Հ/Հ 2050622094601001
ՀՎՀՀ 00160406
Հեռ: 010 20 20 27
Էլ. Փոստ: info@earlyone.com

Գ. Սաֆարյան----------
(ստորագրություն)
Կ.Տ)

Հավելված 3
« » 2025 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-47 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2025 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-47 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն